ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2022 թվականի N 71-Ա

2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածով և համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 26-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2022 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N67-Լ և 2021 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 26-ի N67-Լ հրամանում փոփոխություն կատարելու մասին» N74-Լ հրամանների, որոշում եմ.

1. Հաստատել 2022 թվականին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն կատարող աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի.
2. Ընդունել ի գիտություն, որ անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի գրության համաձայն, աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչները.
3. Աշխատանքային խմբի անդամների մեջ ուսումնասիրվող բնագավառների բաշխումը տեղում կատարում է աշխատանքային խմբի ղեկավարը՝ համաձայն Սյունիքի մարզպետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման գործառույթների:
4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական ու մասնագիտական հսկողության 2022 թվականի աշխատանքային ծրագրի կատարումը և անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2022թ. Փետրվարի 15
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2022 թվականի փետրվարի 15-ի
N 71-Ա որոշման

ԿԱԶՄ

2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Սեյրան Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, աշխատանքային խմբի ղեկավար
2	Թամար Ստեփանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
3	Մարինե Աբգարյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
4	Նարինե Աթայան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության գլխավոր մասնագետ
5	Արմեն Մարտիրոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ
6	Արթուր Արզումանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ
7	Թամարա Կարապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
8	Մուշեղ Կոստանդյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
9	Իննա Բալայան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ
10	Հայկ Կարախանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
11	Մելինե Մարտիրոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ
12	Մարատ Պողոսյան	ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության ավագ հրահանգիչ
13	Էդուարդ Միրզոյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ

14	Սարիկ Աղաբեկյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
15	Աննա Ոսկանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
16	Վահրամ Արզումանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ

Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ **Է.Մարտիրոսյան**